



## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻԳԻԵՆԱՅԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### **Կայուն զարգացմանն առնչվող՝ Լիդիան ընկերության պարտավորությունը**

Լիդիան Ինթերնեյշնլն ՄՊԸ-ն և Ընկերության կողմից վերահսկվող դուստր ձեռնարկությունները («Ընկերություն» կամ «Լիդիան») ձգտում են կայուն զարգացման<sup>1</sup> արդյունքների և պարտավորվում Ծրագրի զարգացման և շահագործման բոլոր փուլերում և ընթացակարգերում ներառել բնապահպանական, առողջության, անվտանգության և սոցիալական խնդիրները:

Որպես այդ հանձնառության մաս, Լիդիանը մշակել է սոցիալական, բնապահպանական, առողջության և անվտանգության, ինչպես նաև մարդկային ռեսուրսների քաղաքականություններ:

### **Ընկերության աշխատանքի հիգիենայի և տեխնիկական անվտանգության քաղաքականություն**

Մեզ համար մարդիկ կարևոր ռեսուրս են և մեր նպատակն է չունենալ աշխատունակության ժամականավոր կորստի հանգեցնող վնասվածքներ: Համոզված ենք, որ բոլոր դժբախտ պատահարներն էլ հնարավոր է կանխարգելել: Հետևաբար, Ընկերությունն իր աշխատանքում որդեգրել է «Զրոյական վնաս» մոտեցումը, որպեսզի իր բոլոր աշխատակիցները, կապալառուները, ենթակապալառուներն ու այցելուները յուրաքանչյուր օր անվտանգ տուն վերադառնան:

Աշխատանքի հիգիենայի և տեխնիկական անվտանգության քաղաքականությունը տարածվում է բոլոր աշխատակիցների, կապալառուների, ենթակապալառուների, հանրության այն ներկայացուցիչների վրա, որոնք կարող են կրել կամ կրում են Ընկերության կողմից իրականացվող աշխատանքների ազդեցությունը: Ընկերության այս քաղաքականությունն ուղղված է հնարավորության սահմաններում ապահով և առողջության համար վտանգ չներկայացնող աշխատանքային միջավայրի ստեղծմանն ու պահպանմանը: Լիդիան ընկերության նպատակն է նաև առողջության ու անվտանգության արդյունավետ կառավարման շնորհիվ ապահովել «Զրոյական վնաս»: Սա ներառում է հետևյալ պայմանների ապահովումը.

- Աշխատանքի անվտանգությանը, առողջությանը և իրականացվող աշխատանքներին վերաբերող հատուկ ուսուցում և վերապատրաստում՝ աշխատակիցների մասնագիտական համապատասխանությունը և վստահությունը բարելավելու նպատակով
- Անվտանգ և առողջ աշխատանքային պայմանների ապահովում
- Աշխատանքի անվտանգ համակարգերի մշակման, նախագծման և ապահովման կազմակերպում
- Պատշաճ կերպով սպասարկվող և պահպանվող սարքավորումներ և տեխնիկա

<sup>1</sup> «Գործընթաց, որտեղ հաշվի են առնվում ներկայիս պահանջները՝ չզրկելով գալիք սերունդներին իրենց պահանջները բավարարելու հնարավորությունից:»

- Արտակարգ իրավիճակների և տարհանման ընթացակարգերի իրագործում մեծ պատահարի դեպքում
- Ընկերության աշխատակիցների հետ առողջության և տեխնիկական անվտանգության առօրյա պայմանների վերաբերյալ խորհրդակցությունների կազմակերպում և տվյալ գործընթացում աշխատակիցների ներգրավում:

Ընկերությունն իր բոլոր աշխատակիցներից պահանջում է իմանալ աշխատանքի հիգիենայի և տեխնիկական անվտանգության վերաբերյալ իրենց պարտականությունները և պահպանել իրենց գործունեությանն առնչվող առողջության և անվտանգության բոլոր պահանջները, ներառյալ՝ սակայն չսահմանափակվելով՝

- Հետամուտ լինել սահմանված տեխնիկական պահանջներին, ուղեցույցներին և հրահանգներին
- Անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքային ժամերին միշտ կրել անհատական պաշտպանիչ միջոցներ
- Ընկերության ընթացակարգի համաձայն՝ ժամանակին զեկուցել բոլոր միջադեպերի, պատահարների և վտանգների մասին
- Առանց առողջությանն ու տեխնիկական անվտանգությանը վերաբերող ասպեկտները հաշվի առնելու չսկսել որևէ հանձնարարության կատարումը
- Անվտանգության պահանջների վերաբերյալ անվստահություն ունանելու դեպքում՝ դիմել ղեկավարին:

Աշխատանքի հիգիենայի և տեխնիկական անվտանգության առաջնային խնդիրները և մտահոգությունները թափանցիկ, միահամուռ ուժերով, բաց և կառուցողական եղանակով կարգավորելու նպատակով՝ Ընկերությունը կհամագործակցի վերահսկող մարմինների և այլ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ Ծրագրի ազդակիր համայնքների հետ:

Կայուն զարգացման արդյունքների ապահովման իր հանձնառության շրջանակներում Լիդիան ընկերությունը բավարար ռեսուրսներ կներդնի իր գործունեության ողջ ընթացքում՝ երկարաբանահետախուզական աշխատանքներից մինչև փակման փուլ, աշխատանքի հիգիենայի և տեխնիկական անվտանգության իր պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Դա կիրականացվի ճկուն կառավարման գործընթացի և մեղմացման միջոցառումների հիերարխիայի պատշաճ կիրառման միջոցով՝ շեշտը դնելով ինժեներական ճշգրիտ նախագծման և միջոցների փոխարինման վրա:

### **Համապատասխանություն**

Ընկերությունն իր գործունեությունը կնախագծի և կիրականացնի իր գործունեության ոլորտին վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության տեղական և պետական օրենքների ու կանոնակարգի համաձայն՝ միաժամանակ հետևելով Համաշխարհային բանկի խմբի/Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի պահանջներին: Լիդիանն իր խորհրդատուներից, կապալառուներից, մատակարարներից և դուստր ձեռնարկություններից պահանջում է ընդունել Աշխատանքի հիգիենայի և տեխնիկական անվտանգության վերաբերյալ սույն քաղաքականության սկզբունքները, որպես նվազագույն չափանիշ:

**Շարունակական բարելավում**

Ընկերությունը պարբերաբար կվերանայի Աշխատանքի հիգիենայի և տեխնիկական անվտանգության իր քաղաքականությունը և անհրաժեշտության դեպքում այն կթարմացվի: Ընկերությունը կկատարի նաև աշխատանքի առողջության և տեխնիկական անվտանգության պարբերական, համակարգված, ներքին աուդիտ: Աուդիտի արդյունքները կօգտագործվեն որպես հիմք՝ առավել ճկուն կառավարման գործընթացի միջոցով բնապահպանական գործունեության շարունակական բարելավման համար:

**Տեղեկատվության ապահովում և իրազեկվածություն**

Ընկերությունն իր աշխատակիցներին, կապալառուներին և մատակարարներին կիրազեկի սույն քաղաքականության մասին՝ վերջիններիս պարտականությունների և Ընկերության պարտավորությունների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Ընկերությունն իր անձնակազմի համար կանցկացնի վերապատրաստման դասընթացներ՝ քաղաքականության պահանջների վերաբերյալ իրազեկմանը և դրանց ճիշտ կիրառմանը նպաստելու նպատակով: Լիդիանն իր կապալառուներից ևս ակնկալում է նման միջոցառումների կիրառում:

Սույն քաղաքականությունը Տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է 2018թ. օգոստոսի 14-ին: